

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 211-Ա

23 հուլիսի, 2020 թվական

**ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի №298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 20-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի հունիսի 19-ի 319-Ա հրամանի հիման վրա 2020 թվականի հուլիսի 22-ին իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեում իրականացվող) գործունեության ծավալումը՝


- 1) Ա/Ձ «Կարեն Բրուտյան», Լոռու մարզ, ք.Վանաձոր, Թումանյան 10ա (ՀՎՀՀ 66809452).
- 2) Ա/Ձ «Սամվել Անանյան», Լոռու մարզ, ք.Վանաձոր, Վարդանանց 51-1/4 (ՀՎՀՀ 66841899).
- 3) Ա/Ձ «Նինա Վարտանյան», Լոռու մարզ, ք.Վանաձոր, Ծատուրյան 55 (ՀՎՀՀ 66973004).
- 4) Ա/Ձ «Արման Տոնոյան», Լոռու մարզ, ք.Վանաձոր, Երևանյան խճուղի 84ա (ՀՎՀՀ 66830198):

2. Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյանին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:

3. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:

4. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Վահե Ղազարյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 23/07/20 16:39:18 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

Տ. ԱՎԻՆՅԱՆ